

Հայապահպանության խնդիրները Սփյուռքի երիտասարդության շրջանում

Գլոբալիզացիայի մեր ժամանակներում, երբ նույնիսկ դարերով պետությունն ունեցող ազգերն ունեն ինքնության պահպանության խնդիր, ակնհայտ է, որ հայկական սփյուռքի, աշխարհի տարբեր երկրներում ապրող հայկական համայնքների համար տեսակի պահպանության, ազգային արմատներից չկտրվելու, ազգային ինքնությունը պահպանելու խնդիրը լուրջ մարտահրավեր է: Սփյուռքահայության, հատկապես երիտասարդության ազգային ինքնության պահպանության հիմնախնդիրը լրջագույն մարտահրավեր է նաև Հայաստանի Հանրապետության համար: Սփյուռքում ապրող յուրաքանչյուր երիտասարդի, իբրև հայի կորուստը, բազմակի կնվազեցնի հայության ներուժը, որը Հայաստան պետության հզորացման կարևորագույն գրավականներից է. չմոռանանք, որ Հայաստանում հայերի թիվը մի քանի անգամ պակաս է Հայաստանից դուրս ապրող հայերի թվից:

Հայապահպանության հիմնական առաքելությունը տասնամյակներ, երբեմն նաև դարեր ի վեր իրականացնում են Սփյուռքի համայնքային, եկեղեցական կառույցները: Ազգային պետության գոյությունը, սակայն, մանավանդ եթե այն դիտարկվում է որպես հայ տեսակի պահպանման ու զարգացման, հայության ներուժի դրսևորման լավագույն գրավական, կենսական անհրաժեշտություն է դարձնում սփյուռքի կառույցների և Հայաստան պետության համաձայնեցված, ներդաշնակ, համակարգված գործակցությունը:

Հայաստանն իհարկե իրականացնում է Սփյուռքի երիտասարդների ազգային ինքնության պահպանությանն ուղղված ծրագրեր, միջոցառումներ, սակայն, կարծում եմ, պետք է օգտագործել Հայաստանի Հանրապետության ինստիտուցիոնալ բոլոր հնարավորությունները, պետական կառույցների, մշակութային, կրթական, գիտական, երիտասարդական և այլ կազմակերպությունների ներուժը՝ սփյուռքի երիտասարդներին փրկելու ուժացումից:

Այս առումով բացառիկ նշանակություն և առաքելություն ունի Հայ առաքելական եկեղեցին, որը դարեր շարունակ, հատկապես հայոց պետության չգոյության պայմաններում, ազգային ինքնության պահպանության և զարգացման կարևորագույն հաստատությունն է եղել՝ իրականացնելով նաև պետության գործառույթներ: Այն սփյուռքի բոլոր համայնքներում գործուն և ազդեցիկ ներկայությամբ համահայկական թերևս միակ կառույցն է: Ուստի անհրաժեշտ է մասնավորապես սփյուռքի երիտասարդության շրջանում առավել կարևորել Հայ առաքելական եկեղեցու դերն ու հեղինակությունը:

Հայապահպանության նպատակին կարող և պետք է լավագույնս ծառայեցվեն նորոգույն ինֆորմացիոն տեխնոլոգիաները: Դրանք, բարեֆախտաբար, մեծ կիրառություն ունեն հատկապես երիտասարդության շրջանում, և հրաշալի հնարավորություններ են

տալիս և՛ հայրենաճանաչության, և՛ հայոց լեզվի, պատմության, գրականության, հոգևոր և նյութական մշակութային այլ արժեքների տարածման համար:

Եվ ոչ միայն: Ժամանակակից տեխնոլոգիաները նաև կապերի հաստատման, շփումների, համագործակցության անփոխարինելի գործիք են և հրաշալի հնարավորություն են տալիս հաղթահարել աշխարհի տարբեր ծայրերում ապրող և գործող հայ երիտասարդներին բաժանող տարածական և ժամանակային խոչընդոտները: Հայաստանի և սփյուռքի երիտասարդների մշտական շփումները ևս կարող են մեծագույն նպաստ բերել ազգային ինքնության պահպանմանը: Պարզապես պետք է հստակեցնել-որոշակիացնել Հայաստան-Սփյուռք երիտասարդական համագործակցության նպատակը, մշակել համագործակցության օրակարգը, ձևակերպել խնդիրները, անհրաժեշտության դեպքում նաև մշակել ժամանակացույց և փորձել ըստ խնդիրների ստեղծել երիտասարդական հարթակներ, որտեղ կքննարկվեն խնդիրներ, կառաջարկվեն լուծումներ, այդ թվում՝ համագործակցության մեխանիզմների, քննարկումների արդյունքները կենսագործելու վերաբերյալ:

Ազգային ինքնության պահպանման կարևոր խթան և արդյունավետ միջոց կարող է լինել Հայաստանի հետ կենդանի գործնական կապը: Ինչն ապահովելու երկուստեք «շահավետ» միջոցը սփյուռքի երիտասարդներին Հայաստանի տնտեսության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ներգրավելու ձևեր, հնարավորություններ ստեղծելն ու զարգացնելն է: Հայաստանի տնտեսության և հասարակական կյանքի ոլորտները ոչ միայն պիտի ստեղծեն մասնակցության հնարավորություն, այլև անհրաժեշտություն դարձնեն այն:

Սփյուռք ունեցող երկրի համար մասնագիտական ցանցերը կարող են դառնալ աշխարհասփյուռ ներուժի օգտագործման լավագույն հիմք: Երիտասարդական մասնագիտական խմբերի մշտական համագործակցությունը կարող է ծառայել ոչ միայն Հայաստան-սփյուռք կապի, այլև սփյուռքի տարբեր համայնքների միջև կապերի ստեղծմանը, ամրապնդմանը և այսպիսով համահայկական ցանցի ստեղծմանը, որը կաշխատի ոչ միայն ի նպաստ Հայաստանի, այլև առանձին համայնքների հզորացման, որոնք կարող են դառնալ տնտեսական և քաղաքական գործոն հայության համար:

Եվ վերջապես, մենք պետք է ամեն հնարավորն անենք, որ սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայ երիտասարդ իրեն համարի Հայաստանի Հանրապետության դեսպանը իր բնակության երկրում և ցանկանա ու կարողանա իր հնարավորություններն ու կարողությունները ծառայեցնել հայոց ազգային ինքնության, հայ տեսակի պահպանությանն ու հզորացմանը, ազգային շահերի պաշտպանությանը, ազգային նպատակների իրականացմանը:

Անկախ պետության գոյությունը վերացրել է հայրենիքի և սփյուռքի միջև անցյալում եղած բազմաբնույթ արգելքներն ու խոչընդոտները: Սփյուռքի

Երիտասարդությունը բոլոր հնարավորություններն ունի Հայաստանում լինելու, Հայաստանը ճանաչելու, Հայաստանի հետ գործակցելու: Եվ պետությունը պետք է ամեն կերպ նպաստի սփյուռքի երիտասարդի և Հայաստանի միջև կենսական կապի հարատևությանը:

Եվ չմոռանանք՝ բոլոր հնարավոր և անհնար մարտահրավերները մենք կհաղթահարենք, եթե կամ երբ յուրաքանչյուր հայ իր ազգակցի հգորացումը համարի իր հգորացման նախապայման:

Մաղթում եմ, որ և՛ Սփյուռքի, և՛ Հայաստանի երիտասարդներն ապրեն ու գործեն այս հավատամքով: